

ԱՄԵՐԻԿԱՆԱԿԱՆ ԳՐԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

Պուշկարիոյ հաւար 12 Յր
Տարեկան 6
Վեցամսեայ 15
Վեցամսեայ 8

Ամերիկայի հաւար 3
Տարեկան 1.50
Վեցամսեայ 8

Իրանացի սուր սուս
ըին երեսին հաւար 40
Իսկ վերջին երեսի հաւ
ար 20 սակարիւ է. երե
սին աւելի սակարներու
հաւար 20 0/0 զեղջ կըլ
լայ:

Վառնայի հաւար ձևոք 10 ւսերիւ

ՇԱՐՋՈՒՄ

Նամակ 12 դրամ դրկի
Խմբագրութեան հաս
ցիկն .

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արտատպութեան հաւար
ձևոք
(20 ՍԱԿՈՒՄ)
Պուշկարիոյ հաւար
ձևոք
(15 ՍԱԿՈՒՄ)

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂՄՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՐԱՆՍԻՒՆ ԶՈՐԵՔԻՆԻՍԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԵՐԵՎԱՆ

Գրութիւնք և յեն տրուի

«ՇԱՐՋՈՒՄ»-Ի ԲԱՏԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՏԱՆԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԿԻՎ ՎՃՍՐԷ

ՆՈՒԵՆ ԳՊՐՈՑԸ

Հաշակաւոր ծարվինի աշխատակից Ուէլլէս անգլիացի բնագէտը «Հրաշալի գար» կոչած է մեր ապրած գարը: Եւ արդարեւ 18րդ դարը զիւտերու գարն էր, 19րդը եղաւ սակայն հրաշալիքներու գարը:

Իրողութեան ըրած նուաճումները բոլորովին նոր հորիզոններ բացին մարդկութեան առջև և յեղաշրջեցին կեանքը իր հիմքէն:

Երկաթուղիները, շոգենաւորը, ելեկտրականութիւնը, հեռախօսը, լուսանկարչութիւնը, սպիկառային վերլուծումը, անզգայացնող միջոցներու գործադրութիւնը եւն, մշտնջին մարդկութիւնը դէպի յառաջ և ստեղծեցին եւրոպական ներկայ քաղաքակրթութիւնը:

Ո՞վ էր սակայն այս հրաշալիքը կատարողը: Դպրոցն էր այն: Եւ ճիշտ անոր համար է, որ քաղաքակրթութեան արեւմուտքի մէջ այն քան մեծ կարեւորութիւն կուտան դպրոցին ու կը գուրգուրան անոր վրայ: Փառքիկ Զուիցերիան տարեկան 21,000,000 Ֆր. կը յատկացնէ իր բանակին պէտքերուն համար, իսկ 42,000,000 Ֆր. կը ծախսէ իր դպրոցին համար: Փաստը պերճախօս է, յաղաքակրթութեամբ շատ բարձր ժողովուրդ մը ահա, որ իր ամեն մեծ ուժերը կը դնէ դպրոցին տրամադրութեան տակ:

Իսկ մեր դպրոցներուն համար ի՞նչ կընենք մենք հայերս: 25-որ մենք ալ կուզենք լուսաւորուած երկիրներու օրինակին հետեւիլ և որ մը անոնց կարգը գասուիլ, խնդիրը սահմանափակ ենք և հարցնենք. ի՞նչ կընենք Բուլղարահայերս, ի՞նչ կընենք մենք Վառնայի հայերս մեր դպրոցներուն համար: Յաւանք է ըսելու, որ շատ քիչ և աննշան բան: Կարելի է ըսել մենք նոյն իսկ մոռցած ենք մեր դպրոցները, այն սրբավայրը, ուրկէ գիտու-

թեան լոյս և քաղաքակրթութիւն պիտի տարածուի մեր մէջ, այսինքն պիտի գործուին Ուէլլէսի հրաշքները: Փաստը տխուր է, իրողութիւնը կսկծալի:

Մարդու սրտէն արիւն կերթայ երբ, կը տեսնէ հայ երեխաներ, որոց դաստիարակութեան վրայ ոչ խորհող կայ ոչ հողացող: Մինք ձգելով մեր մատաղ սերունդի կրթութեան ու գաստիարակութեան գործը այսպէս նշեցի վրայ, գործած կրլլանք մեծ սճիր մը և պատասխանատու ենք ճակատի ու երկրի առջև:

Պարտիզպանը որքան մեծ խնամք կը տանի, որքան կը գուրգուրայ իր նորափոխ յոյսերուն վրայ: Մեր փոքրիկներն ալ այդպիսի բոյսեր են, որ եթէ չը խնամենք պիտի խամրին և դժուար ծաղկած պիտի թողնուին: Ո՞չ, այսպիսի ահաւոր պատասխանատուութիւն կարելի չէ առնել իր վրայ: Թօթափենք արեւելեան ծոյլ ու մեղկ թուրութիւնը մեր վրայէն և հաւաքուելով դպրոցին շուրջը սկսինք մարդավայել գործի...

Մենք ուրիշ առթիւ արդէն խօսած ենք մեր դպրոցներու թիւրութիւններու մասին, այս անգամ մասնաւորի պիտի ընենք ուրիշ կէտ մը: Որովհետեւ դպրոցը մտաւ և հաստատուն քաղցրով կարեւայ առաջ երթալ պէտք է անոր զուլք գտնուի ձեռնհաս և կարող վարչութիւն մը, որ հետաքրքրուի դպրոցով, հաշիւ տայ, հաշիւ պահանջէ ու հողայ դպրոցին բոլոր պէտքերը:

Մեր դպրոցներուն վարչութիւնը կը վարեն մեզմէ ընտրուած հողաբարձուներ: Ուրեմն ժողովրդին կը մնայ իր դպրոցին տալ կարող և հասկցող վարչութիւն մը:

Գանդից ձգձգուելէ վերջ հիմայ Վառնայի թաղապետութեան հրաման է կած է յաջորդ կիրակի նոյնմբեր 9-ին վերջնականապէս կատարել Վառնայի հողայ դպրոցներուն համար հողա-

բարձուներու ընտրութիւն (նտրութիւն իրաւունք ունին 30 տարեկանէն վեր տեղացի բոլոր հայերը, ընտրելու իրաւունքը նոյն պէս վերապահուած է պուլկարահայտակներուն: Լոկ իրաւունք ունինալը բաւական չէ, պէտք է զայն կատարել խղճի մտք և ծառայեցնել հոսարակաց օգտին:

Մենք կը ցանկայինք, որ ներկայ ընտրութեամբ Վառնայի մեր դպրոցներուն ղեկը անցնէր կարող և գործունեայ վարչութեան մը ձեռքը:

Մարգարիտեանի

ՎԱՏ ՆՃԱՆ

Դեռ անցեալ գարի երկրորդ կէտից սկսած հայ ժողովրդի հոգում ծագած ազատութեան, ինքնագիտակցութեան գաղափարն ու ապագայի մտայն ու աղօտ հեռապատկերը, միշտ քանակաւ հանգամանքներ թերմամբ գնալով ծանր ծանր, աւելի ու աւելի բողբոջուեցին, աւելի խոր արմատներով ամրապնդեցին նրան սրտում: Սակայն եկան տարիներ, հասաւ 90ական արիւնտա թրւակները և զարեւոյ կուտակուած ժաշը սկսեց դուրս թափուլ, լոյս աշխարհ բերելով հեռու անցեալից սկսած գաղտնի, քոյարկուած կռիւր, որը կատարել կիրպարանք էր ստանում, երկար շանցաւ և 94ի կոտորածները պայթեցին ժողովրդի գլխին ու տարան, սրբեցին այնքան անմեղ զոհեր, մոխիրներ մէջ թողնելով 100 հազարաւոր վիրաւոր դիակներ: Զարհուրելի վարագոյրը բարձրացաւ ու դարերի հոսանքում գործուող սճիրը այժմ աւելի պարզ պծերով արտայայտուած՝ ցնցեց սթափեցրեց զոհին անարթութեան մահարեք քնից: Սեւ օրեր էին, ջարդի ու չարիքի օրեր, որոնք մահի շնչով անցան ամբողջ Հայաստանի երկնքով: Այժմ ապագան մոայլ չէր, այժմ ամէն ոք կարող էր ստել, առանց տարակուսանքի, թէ ինչ է ապագան Տաճկահային:

Անսպասելի արհաւիրքներն ու մասսային կոտորածները ելեկտրական ցնցումով կարեւա շարժեցին, աւելործեցին ամբողջ Հայաստանը: Յեղափոխական տրամադրութիւնը արդէն երեւում էր բոլոր անխաւած

ընթացներուն և իբրև դրանց տրամաբանական ու անխուսափելի հետեւանք՝ յայտնեցին դանազան կէտերում ու ժամանակներում Ֆէդայական վրիժառու խմբերը: Նրանց նըպատակն ու բաղանքը կայացել է, ու ուժն էլ ինչպէս նոյնն է, երկու գլխաւոր կէտերում, հսկել ամէն անգամ վտանգուած վայրերի անգէն բռնակցութեան վրայ ամենայն անձնըւիւրութեամբ, և տրամադրելի միջոցներով գինել նրան ինքնապաշտպանութեան փրկաւէտ գործի համար: Բացի այդ, Կ. Պոլսոյ 96ի ցոյցն ու իմանասօրի արշաւանքի գործը արդէն բաւական լուսափառ գոյներով արտայայտեցին, սփռեցին տանջուած ժողովրդի կրծքում կուտակուած վրէժի, այնքան արեան վրէժի թոյնը: Սրանք արդէն ժողովրդային լուրջ, զորաւոր կազմակերպուած յեղ. գործեր էին:

Ուրեմն, կայելի էր յուսալ, թէ մտ է փրկարար մօմէնտը, երբ ամբողջ հայ ժողովրդը կառավարող միմիայն տաճկահայի ազատութեան պաշտպարով և չի խնայէ ոչ մի միջոց հասնելու համար իր խեղալին, իր բբազան տենչանքին: Սա գոնէ պատմական սովորմտիկ երեւոյթներինց ու անցքերինց պիտի հաստատ համոզուած լինէր իրան փրկութեան հասցնող մեակ ճանապարհին, իր մարդկային ամենատարակաւ իրաւունքները խելու համար կաշկանդող բռնակալութեան մագիլներինց:

Սակայն ջարդերի ազդած սպառնութիւնն ու յեղափոխական խանդավառ ոգեւորութիւնը վաղանցիկ էին: Ուժերը ծանր-ծանր բաժանեցին, ամբողջ ջատուեց ու գրոշակակիրները յիացին ստանձին, մին-մեկական հաւատարմարտուած: Նոր ու բոլորովին անյուսալի ներքին ջարդերի, եղբայրասպանութեան հասնող երկպառակութիւնների գարշահոտ ալիքներն էլ եկան խփեցին յեղափոխական յորջորջող բաղդախնդիրների վոհմակին և պարզեց, թէ մաքուր ուժերը աւելի սահմանափակ թիւ են ներկայացնում հեծող, տառապող ժողովրդի մէջ: Եւ սակայն ամփոխը, մեծամասնութիւնը՝ ինքնամոռաց անտարբերութեան քունի մէջ թաթախուած՝ դեռ յորանջում է նա համբարշխութեան, միութեան, համբերութեան ու համակերպումի՝ թունաւոր ու այնքան քաշկուտած, որոճուած մեղդիների ազդեցութեան տակ:

Մէկը միւսի ետեւից հայ ազգի նասնող ահաւոր հարւածները անտարբեր հասարակութեան մէջ զարթեցնում

են միայն հետաքրքրութեան փոքր նշոյններ, մերթ ընդ մերթ թեթեւ կերպով խանգարում են նրա խաղաղ բուռը, Հանդիպում են մի հայարընայն քաղաքում սպառնալից մէկին, նայրակ գործունէութեան ամենավտանգոտն տարիքում իր րի տասարդի եւ նա քեզ չարք է սպիրտ առատաւելն թէ լոնչ են տնում մեր յեղափոխականները, ինչ նպատակ ունեն ներկայ քաղաքական հանգամանքներում, որպիսի դիրք են պահում կողմնակի մէջ հայոց կեղծացական կալածանքի գրաւման հանգիւյ եւ... այդչափ, Ա. ելի ո՛չ մի բառ, ո՛չ մի հարցում, գուցէ եւ պակաս, որովհետեւ նա զուրկ է երբեմն եւ ամենամանր անցքերի ծանօթութիւնից, Եւ այդ երկուստարգը, որ յամենայն դէպս իրաւունք ունի սազգասէրիս արտոյն վայելել, նա էլ, դժբաղդարար հարիւրից մէկն է, Այդք չի ուզում իմանալ, թէ որպիսի գործիւն է արում երկրում, կողմնակի, որից կարեւոր կը լինի եւ յեղափոխական գործի ընթացքը եւ արդեօք պարտականութեան նման մի բան էլ ծանրանում է նրա ուսերին:

Դա շատ դառն ու ցաւալի փաստ է, որ մեր յոռաշարիւթեան համար վատ է խօսում:

Հմիկ Շղարչեանց
20 հոկտ.

ԲՍԾ ՆՍՄԱԿ ԹԱԻՐԻ ԶԵՒՆԵՐԻՆ

Ճիշտ է որ Ատրպատականի թեմին Ազգային կանոնադրութիւնը կազմելու մէջ Նիդիլն նախաձեռնութիւն ունեցել է, սակայն սկսեք է յիշեք առած էր Ատրպատականի թեմին նախորդ և Պարսկահնդկաստանի ալմուսէն Առաջնորդ Կեր. Տ. Սահակ Այվասեան, որը առաջնորդ ընտրուեց թողութեան իրաւունքը վեհափառից մասնաւոր կոնդակով ձեռք բերելով նոյն ընտրական սկզբունքի հիման վրայ էր արդէն Նիդիլն ընտրուեց, Իսկ կանոնադրութեան իմացագրութեան գործում Նիդիլն մասնակցած է իբրեւ մի ձայն ունեցող անկատ, խմբագրական յանձնախումբի ալ անձերի շարքում: Աւելի ցաւալին կայ այդ կանոնադրութիւնը գործադրելու Նիդիլն տարիներով ձգտում է, իր միասնականութեան և ինքնուրու բուռն տենչին ու ձգտումներին գոհացում տալու համար:

«Գործը թեմի հրատարակումը» ինքն ըստ ինքեան ուրախալի երեւոյթ էր, մի թերթ չունենալը Պարսկահայերի համար անթի էր: Բայց Նիդիլն այս գործում նախաձեռնութիւնը մի այնպիսի անսակա կերպով տեղի է ունեցել, որ Պարսկահայերը նոյնիսկ գրկուում են թերթ ունենալու յոյսից և իրաւունքից և դուրսէ շատ մեծ ջանքեր ու զոհողութիւններ են հարկաւոր, որ այդ արտօնութիւնը կանոնադրութիւնից ձեռք բերելու կարելի լինի: Մի ուշադրաւ կէտ էլ կայ այդ թերթը Նիդիլն իր փաստ սիրական և դատարարական ձգտում ներքին ազատ ապարիզէ ընտրում և այդ իսկ անզուսպ տենչով ստանց նախապէս կանոնադրութիւնի արտօնութիւնն ձեռք բերելու արտօնութեան հրատարակում է «Գործի» առաջին թիւը: Եւ ինչպէս լսում ենք, այդ պատճառով կանոնադրութիւնը ե-

կորոզ անգամն լինելով արգիւում է թերթի հրատարակումը: Այս նախափորձն էլ վճռում է և սպազալի համար վնասակար դառնում:

Անցեալ տարի Նիդիլն Ստամբուլ գալով ժողով գին աւարտան կողմէն ներով կանոնադրութեան գործի շէնքի համար Հաւթեան գրողում մի գետին է գնում: Գուցէ այդ գործի կանոնադրութիւնը Չարք գարում տեղի ունենայ, բայց գլխաւոր կատարի կէտն այն է, որ վատագու է փողոք այսօր նոյնիսկ անհոգութեամբ մնում:

Ուրեմն, տեսնում էք, որ Նիդիլն այս գործերում մի մեծ բան չէ արել: Սրանք դեռեւս Նիդիլն յայ գործերն են համարում (՞), այժմ էլ յիշեք նրա վատ կամ վնասակար գործերը, որոնց մեծագոյն մասին դուք ակունատես էք եղած:

Նախ կրթական հաստատութիւններին սկսեք:

Դուք ամենքդ էլ, նոյն իսկ հաստատութիւնները, ձեր սրտի խորքերից անկեղծօրէն վկայում էք Լիւթաւայի երկուսու գործերի ստաշարի մեթոդներ և արդիւնաւոր ուղղութիւնը, համարում ենք, որ նոյնը վկայում է նաեւ Նիդիլն ինքնը, բայց որովհետեւ ուսուցչական խմբի մէջ նրան շող-քորդներ չէին գտնուում և ընդհ կատակը նրա սխալ արարքները քննադատող էր Լիւթաւայի, Նիդիլն միմիայն անձնական կրթից կուրացած և վրէժխնդրական ոգուց դրդած միաքը գրից թարիւրից հեռացնել խմբին, երեսանց իրան բարեկամ ցոյց տալով, Նիդիլն այս ցածանոցի վարժուեալի վկայ են եղած նրա շատ մտ եղողներին երկուսը, իմբին յայտնի էր նրա այս երկերեսանի ստոր վարժուեալը, բայց յոյս ունէր որ ժողովուրդը գնահատելով իր գործը կը չլքեցանք նրա լաւութեանը: Ինչպէս որ սխալած չէր, ժողովուրդը փառաւոր կերպով արտայայտեց իր համակրութիւնը խմբին, երկրորդ անգամ ընտրելով հոգաբարձութիւնը, բայց չէր կարողացաւ բողոքովին յարթել Նիդիլն Լիւթաւայի կրթիւն, որը իրան պաշտպանող վահան ունէր ստախտութիւնը և խաբեարութիւնը:

Արդեօք արժէ՞ յիշել, որ շատերը գուցէ կարծում էին, որ Լիւթաւայի ուսուցչները ուրիշ սեղ հաց չէին աշխատում և միայն հացի համար ցանկանում էին թարիւր մնալ... այց կրկին ու կրկին հրախուսած այդ ուսուցչական խումբը լոկ սկզբունքի ինքրի համար իր հրատարականք տալով, փառաւոր ապտակը տւած եղաւ այդպէս մտածողներին, միւսնոյն ժամանակ իր անձեւորութեան և սնահասխնդրութեան բազարձակ ապացոյցը տալով: Սակայն ինչպէս էլ Նիդիլն ուզէր՝ կարող էր ստանց այգիլի թարիւր մնալ, որովհետեւ, նախ հոգաբարձութիւնից երեք տարւայ համար օրինաւոր պայմանութեանը ունէր ձեռքումը, որի ուժով իրաւունք ունէր մի տարի էլ (1903-1904) պաշտօնավարել: Սակայն Ռաշադեան Սուսանեանց չէր, արժանապատուութեանը զգացմունք ունէր երկրորդ նախորդ հոգաբարձութիւնը խմբին համակիր ժողովուրդից էր բարկացած, նա կուրղ էր ի համարելուց անալ (որովհետեւ գրում էր տարւայ իրաւունք ունէր) խումբն վրձն և հետոյ հրժարել: Բայց այդպէս արեւց, որպէսզի կուսակցական ոգի ցոյց չէ տայ, այդ բանին նոյնիսկ խումբը համաձայն չէր, նկատի առ-

նելով որ կարող էր պատահել, որ նոր ընտրելիք հոգաբարձութիւնը իրան համակիր չը լինէր երրորդ Նիդիլն իմանալով, որ Ռաշադեան այն պայմաններով, ինչ որ ինքը առաջարկել էր (տես Վաւրճանօ, 8), չէր համաձայնել տեսել լինելու, երկու անգամ նրան հրաւիրում է տեսչութեան պաշտօնին, նոյնը արեւց նաեւ երրորդ անգամ ընտրած նոր հոգաբարձութիւնը, բայց Ռաշադեան մերժեց, որովհետեւ նա միայն իր հացի վրայ չէր մտածում, այլ գործի վրայ, որը իրա համար աւելի սուրը և նորական էր քան թէ իր շահը Սակայն գտնեցին որ ինչներ, որոնք չորս տարով վաղցին նոյն պաշտօնին, առանց իսկ մտածելու արժանիքի և արժանապատուութեան մասին, միմիայն անձնական և կուսակցական շահերից առաջնորդում: Այս ո՞րտղ է աղին մարդկանց տարբերութիւնը:

Նիդիլն գրեթէ գաղտնագողի կերպով կատարեց Ա. նոր հոգաբարձութեան ընտրութիւնը, որը բաղկացած էր մեծ մասամբ գաղտնի առաջարկական և արժանապատու ուղղութեան հակակիր ժողովուրդից: Լիւթաւայի հաստատութիւնը Նիդիլն այդ խաղը զգաց և իսկոյն բողոքեց այդ ապօրինաւոր ընտրութեան դէմ, Նիդիլն ստիպուած ինկանց իր նախազանութեանակ կատարած այդ ապօրինաւոր ընտրութիւնը և նոր ընտրութիւնը հրամայեց, կանխարձութեան սկզբունքներով (տես այս մասին Վաւրճանօ, 8): Ժողովուրդը փառաւոր կերպով ի հոգաբարձութեան ընտրութիւնը կատարեց, խումբին համակիր մարդկանց քուէ տալով, Նիդիլն սակայն չը յուսահատեց, նորանոր միջոցներ մտածեց այդ օրինաւորակութեանը հոգաբարձութիւնը սկզբունքներով պատճառ եղաւ նրանց հրատարակուն և այս կերպով կազմալուծեց հոգաբարձութիւնը: Նիդիլն կարգադրեց Գ. նոր հոգաբարձութիւնը ընտրել տալ և այս անգամ հաստատութեան վնասութիւնից օգուելով, աջողեց այնպիսի մարդկանց հոգաբարձութեանը ընտրել տալ, որոնք անձնական և կուսակցական շահերը հաստատական շահերից բարձր են դառնում, որոնց մաքրից երեք անգ չը կենար գաղտնի առաջարկութիւնը և ուղղութիւնը, և որոնք միակ նպատակի է իրանց մարդկանց հաց ձարել, թէկուզ այդ հացը մասալ սերունդի բարոյական մահով նւիրագործւած լինի: Այս բանը նրանք ժամանակին գործով էլ ցոյց են տալ և այդ մասին Միդիլն մանրամասնօրէն գրել է «Շարժումի մէջ», դուք լսւ էք չիւում ինչ Ջոշայի և Գրիգորի ինքրիւրը:

Դոնիս. Կ. Փ. Մշական - Խան (Շարունակելի)

ՎՐԻՊԱԿ

Մեր նախորդ թիւի ոտանաւորին երկրորդ տան սո ջին տողը պէտք է կարգաւ - Մինչ աչքերս երկինք յոռած փոխանակ կարգաւոր Մինչ աչքերս երկինք յոռակ և վերջի տան երկրորդ տողը - Դաժան հոկայ կընը՝ ձեռ փոխանակ - Դաժան հոկայ կընը միւր:

Պարկազէն տեղական թերթի մը գրուած թղթակցութիւնը առիթ տուաւ սոյն երկտողիս: Պարկազի յոգուածագրին մի քանի տողերը Սյուլենի նկատմամբ և վարդապետի մասին մտանանիչ եղած լուսթիւնը թագուն նպատակի մը վնասգրելը զարմացուց մեզ: Մենք այդ տեսակ ենթադրութիւն մը անտեղի կը գտնենք:

Վարդապետը լաւ մարդ է կամ վատ, այդ մեզ բնաւ չի հետաքրքրեր: Մեզ պէտք եղածը գործն է: Պարկազայց առաջնորդի մը պէտք թունի, ինչպէս դուք, մենք ալ կը փափաքինք որ գործունեայ և ժողովրդային առաջնորդ մը ունենանք: Վարդապետը այդ գործը յաջող կերպով գլուխ հանեց և ստով կատարեց մեզ համար օգտակար գործ մը: Հիմայ լոնչ հարկ ելլել անտեղի յարձակումներով ըզբողեցնել հրապարակը:

Գոտգամաւորի ընտրութեան միջոցին եղան հակառակութիւններ, բայց շնորհիւ սպառնիւն պաշտօնեաներու աղին վարժուեալին՝ նորէն անհետացան: Սլիվէնցին խաղաղասէր է, որովհետեւ թէ ասկից առաջուան թագական հոգաբարձուները և թէ այժմեանները բնաւ խառնութեան տեղիք չեն տուած, և սալ ալ չեն ուզեր, որովհետեւ հակառակ պարագային տուածող վարժարանը և եկեղեցին պիտի ըլլան:

Աստի՛ Պարկազի յոգուածագրին ուղղելով մեր խօսքը՝ կը յայտարարենք որ վարդապետի մասին եղած լուսթիւնը ունէ թագուն նպատակ մը չունէր: Պէտք է գիտնալ, որ արժեք չունեցող խնդիրներ լրագրական նիւթ ընել և անոնցմով հանրութիւնը պարզեցնել մեր դազափարէն գուրս է:

Անցեալ տարի ազդին զաւակները դպրոցական ամուլ շրջան մը բոլորելէ վերջ, ուրախ ենք ըսելու որ ներկայ շրջանը բաւական լաւ ըլլալ կը իստատանայ: Հոգաբարձութիւնը կը ջանայ իր կարողութեան շարժովը բարեկարգ վարժարան մը ունենալ:

65 երկսեռ աշակերտներ կը յաճախեն վարժարան ու կը կուսովարուին երկու ուսուցչիներով: Պ. Եկեղեցիան գլխաւոր ուսուցչին է ու խղճամիտ պաշտօնեայի տպուորութիւն կը ձգտէ: Հոս ալ պակաս չեն իրենց գաւակները օտար վարժարան գրկուց հայեր, նոյն իսկ ազգասէր հայեր: Անհասկանալի է ստոնց նպատակը: Ինչ ընել կուզեն ա-

նստիք իրենց զաւակներուն բա-
րիք թէ չարիք: Տղայ մը, որ
գեռ հայերէն երկու բառ թոթո-
վել չի գիտեր, բռնել օտար
վարժարան զրկել միթէ անզգա-
յութիւն չէ: Մեր վատ սովորու-
թիւններէն մէկն ալ աս է, միշտ
օտարիքը սիրել, օտարիքը գո-
վել, իսկ մերը պոխտակելի և
որ օտարիքն է, լքել զայն նիւ-
թապէս և բարոյապէս: Անցեա-
լէն փորձուինք և ինքզինքնիս
ամփոփելով շանանք մեր գոյու-
թեան մասին լուր կարելի ե-
ղած միջոցները գործող ըլլալ:
Զմոռանք դժն բանաստեղծիւն
խօսքերը. «Օտարն, ա՛խ, միշտ
օտար է»:

Ըստ յայտարարութեան տե-
ղիս քահանայ հօր երեկ կիրակի
կատարուեցաւ հոգեհանգստեան
պաշտօն հովիտահայ նահատակ-
ներու համար: Վարդիակ քահա-
նան խօսեցաւ Ռուսահայ կալ-
ուածներու գրուման մասին և
գովեց Վեհափառին կորովի վար-
մունքը: Յետոյ զգացուց, թէ
այս անակնկալներէն վերջը ու-
րիշ ճար չէ մնացած հայուն,
բայց եթէ միայն փարիլ յեղա-
փոխութեան, որ ազատութեան
միակ միջոցն է: Ժողովուրդը
յուզուած էր, յուզուած էր նաև
քահանան: Տէր հայրը սպիտակ
Վեհափառ Հայրապետին և հա-
նուր հայութեան համար մաղ-
թանքներով վերջ տուաւ իր
քարոզին, որմէ յետոյ սկսած հո-
գեհանգիստը:

Միտքան

ԼՐՏԵՍԱԿ ՊՈՒՔՐԻՇԵՆ ՄԷՅ

Ռուսահայ Եւրոպայի գրուած
երկուող մը կըզգուցանէր մեր գաղու-
թը Արիքսան Չիլիկիւրեան անուն
ազոտտ արարած է մը:

ՓՇԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ

(15)
ՆՈՒԷՐ Ս. Զ. — ԻՆ
ԳԼՈՒԽ Գ.

—Այս պէտք է երկրի հետ մօտի-
կից ծանօթանալ. պէտք է օգտուել
ծանր փորձերից և պէտք է շրջանա-
յեաց լինել բայց գեղարար մենք
Ռուսահայ յեղափոխականներս, որ-
չափ էլ որ անձնազոհ և խոհուն մար-
դիկ լինենք, անկարող ենք այդ ան-
հրաժեշտ և շատ օգտակար ծանօթու-
թիւնը ձեռք բերել, քանի որ երկրի
պայմանները մեզ համար անհնարին
են գործնական երկրում երկար ապրել
և մեծ ու լայն չափերով չլինում աննե-
նալ այն ժողովրդի հետ, որի ազա-
տագրութեան գործին ամեն բան գո-
հելու պատրաստ ենք:

Տաճկահայի ամենամեծ զգաւորու-
թիւններէն մէկն էլ այն է. որ բա-
րոյապէս և մտաւորապէս բարձր զե-
կավար գործիչներ շատ քիչ ունի, ո-
րոնք ամէն զօնողութիւն յանձն առ-

Ստուգիւ, այդ եղբայրացաւ վա-
տը, որ վառնայի թիւք հեզատու-
տարանին մէջ իրրեւ լրտես-գրագիր
կը ծառայէր աստիճան ի վեր, իր
բռնած մատնչական աբարքներովը
ոչ միայն հոգեբու, այլ նոյն իսկ
թուրքերու խիստ հալածանքին են-
թարկուելով, իր գործակից գոն.
սիւլին շեռ վառնայէն վառնուած էր
վերջերս և գաղտագողի հոս գալով
իր վատ փեսային քով ապաստանած
էր:

Եթէ խնդիրը անհատական ըլլար
մենք երբէք ձանձրութիւն չպիտի
յանձն առնէինք այս քանի մը տո-
ղբու հրատարակել տալու, բայց ո-
րովհետեւ այդ անձին շահատակու-
թիւնները հասարակութեան շահուն
կը դային, կարծէ վանի մերկապա-
րանոց ընել մատնանշելով անոր մու-
թի մէջ գործած մեղատեղութիւն
ները՝ միշտև որ պէտքստանայ, իսկ
հակառակ պարագային այդպիսին
պատիժը որոշ է որ ոչ լուրջէ ուն-
կամք, լուրջէ թիկամքի կարճ ճամ-
բովը: Ասանկները ուր որ ալ ըլլան
համը կը փոխանեն. դեռ
հոս հասնելուն ամիսը չլրացած, ար-
դէն այդ աներեսը սկսու անկել գայ-
թակողութեան քարը, որովհետեւ
քանի մը օր ատաղ իր փոքուն փեսին
հետ միացած տարածայնեց՝ թէ
«խուս մը գաղթականներ» ստո-
րագրութեամբ նամակ մը ստացած
են, որով իրենց կեանքին կապու-
նացուի եղբւր: Մենք այդ վատնու-
թաքուն և լրտեսակա՞ն նպատակնե-
րուն ծանօթ ըլլալով, պարզապէս կը
պնդենք որ այդ հնարուած նամակը
նոյնիսկ իրենց խելքին ելած խաբ-
քախտութիւն մըն է և և թէ ատով ո-
րոշապէս կուզուի սրբի կարգ մը
արթուն հոգիներ, որոնք միշտ կը
պոխտարկեն այդ վատնամբու գոյ
գին փաստակար ընթացքը:

Հիմակուհի մայ անգամ մըն ալ կոչ
կընենք տեղոյս հայ գաղութին որ-
պէս գի հեռու կենան Չիլիկիւրեանի
և իր օգնականի շուքն իսկ, չը
խաբուին մանաւանդ առաջինին քո-
նող կեղծքներէն, որոնցով կը շա-
նայ կըլեցնել տալ թէ լրտես չէ՛ հրեշ-
տակ մըն է...

Այս անձը պէտք չէ չփոխել Պ.

նեղով երկիրը ամբողջ վիճակ ուսում-
նասիրէին և այդ ուսումնասիրու-
թեանց հիման վրայ գործունէութեան
ծրագիր գծվէր և սխալէ՛մ ստեղծվէր:
Այսօր ոչ մի հայ յեղափոխական
կարեւոր, ղեկավարող դեր կատարող
գործիչ, լինի նա Ռուսահայ կամ
Տաճկահայ, չի կարող պարծենալ թէ
Հայաստանի և հայ ժողովրդի մասին
հիմնովին ու մանրամասն տեղեկու-
թիւններ ունի: Ընդհակառակը յա-
ճախ եղած տեղեկութիւններն ու
ծանօթութիւնները բոլորովին սխալ
են. բայց այդ բոլորը չեն կարող
մեզ ստիպել որ ձեռքերս ծալած նս-
տինք և ամէն ճիգ չը թափենք օգ-
նելու, չի թապէս և բարոյապէս
զօրավիգ հանդիսանալու. երկրի այն
գործիչներին, որոնք զօրօշոյսին պայ-
մաններին կուրծք տալով, աշխատում
են յեղափոխական ոգին վառ պահել
սարսափահար ու լքումի գիրկը նետու-
ելու. պատրաստ ժողովրդին մէջ,
Յեղափոխական գործը շարունակելով
է որ պիտի ստեղծի ապստամբական
ուժը, բուն երկրի մէջ իր պարզ
զինւորներով, իր վարիչներով

Մկրտիչ Չիլիկիւրեանի հետ, որը
անոր հետ սեւ է յարաբերութիւն
կամ ազգակցութիւն չունի:

Մ. Սեքեան
26 հոկտ. 1903
Պուքրէ:

ԿՐԻՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒԹԻՒԹԻՒՆԸ
ՈՒ ԿԱՐԵՒԹԻՒՆԻՆԸ
(Մանկավարժական)

Այնքան անօգնական ու տկար
է երեսուն իր կեանքի սկիզբը,
որ կարճ մասնակէն գոյութիւն
ունենալէ պիտի դադարէր, եթէ
չլինք խնամելու ու հոգալու հա-
մար բարախոյ սրտեր չը գանու-
էին իր շուրջը: Ան անկարող է
դեռ կամքին ազդեցութեան տակ
շարժումներ կատարել, չի կրնար
նստիլ, կենալ և քայլել: Այս
նախական շրջանին մէջ երա-
խան միշտ քնանալու հակամէտ
է, այս շրջանին բարգաւաճումը
յարարերարար աւելի արագ տե-
ղի կուեննայ քան յետոյ:

Նմանապէս երախային մտաւո-
րական կեանքը սկիզբն անկեր-
պարան վիճակի մէջ է:

Երախան տակալին գիտակցու-
թիւն չունի, չէ կարող զազա-
փարներ ու մտածումներ ունե-
նալ և զանոնք ըմբռնել, սակայն
առաջացող մարմնական աճման
հետ խելի և մտքի զարգացումը,
կրկնայ պաղը, տաքը, իր ան-
հանգստութիւնը, ինչպէս մար-
մինը հոգածութեան՝ նոյնպէս
միտքը կը կարտի կրթութեան,
առանց որոյ բնական յատկու-
թիւններ կը կազան, գիտակ-
ցութիւնը փոխանակ կատարելա-
գործուելու միակողմանի, թերի
ու անձնակ վիճակի մը կը մատնուի,
անտաշ ու անտոյգ մտապատկեր-
ներով խնուած, իսկ կամքը
ստորնացուցիչ հակամտերու գե-

րին կը դառնայ:

Նոստ փորձերով փաստուած խ-
րողութիւն մըն է թէ, ուր որ
կրթութիւնը զանց առնուած է,
հեռեւեանքը եղած է միայն սրտի
ու մտքի անկում ու դարձած
ամէն կերպ անյաջողութեանց
պատճառ: Կրթութիւնը կառաջ-
նորդէ մարդը իր սկզբունքնե-
րուն համաձայն գործելու, որով
նկարագիրը կազմող երկու ամէ-
նակարեւոր տարրերը կը լրա-
նան. հետեւաբար նպատակին
ծառայող կեանքի մը համար ան-
հրաժեշտ և կարեւոր է կրթու-
թիւնը, դաստիարակութիւնը,
իսկ այն մաս գերը, զոր կրթու-
թիւնը կը ստանանէ սերունդնե-
րու զարգացման գործին մէջ կը
պարտաւորէ մեզ լրջօրէն ու շա-
գրութեան տառակայ դարձնել
զայն:

Կրթութեան կարելիութիւնը
սերտ առնչութիւն ունի անհա-
տին զարգացման ընդունակու-
թեան հետ: Անհատ մը կրնայ
բնականէն մեծապէս օժտուած
ըլլալ. ընդունակութիւնները չեն
որ կը պակսին, այլ անոնք կը կա-
րտին ուղեցուցի մը ամենայնպէս
կերպով բեղմնաւորուելու համար:
Եւ կեանքի ո՞ր շրջանին մէջ կը-
թութեան համար եղած ջանքե-
րը յաջողութեամբ կը պսակ-
ուին, եթէ ոչ մանկութեան օրե-
րուն մէջ: Միջկրթական աճումին
հետ զուգընթաց կը յառաջանայ
մտքի զարգացումը ու միտքը ա-
մէն տեսնէ աւելի հիմայ է որ
իւրացնելու բուն փափաք մը
ունի: Ինչ միջոցաւ կարելի է
գոհացում տալ այդ փափաքին:
Անհամար են միջոցները, որոնց
ամենազլխաւորն է սպայն իրա-
ղնութիւնը, որուն կը յաջորդէ
բնականօրէն զայնափարնեք ու
կազմութիւնը և անոնց վերջիչու-

ոչ քաջ սասունցիների հերոսական և
անհաւասար մարտը և ոչ զէյթունցի-
ների յաղթական կոխը:

Ասոր թիֆլիսի և Բագուի հայու-
թիւնը, որոնց թիւը տասնեակ հա-
զարները անցնում է, որոնց հարս-
տութիւնը անբաւ է, յեղափոխական
գործի համար մուրացկանական նւեր-
ներ են տալիս, կամ բողոքովին ոչինչ
չեն տալիս: Սասունի և Չէլիքունի
նման զէպեր եթէ յոյներին, յեղափո-
նորի և այլ ուրիշ ցեղերի կեանքի մէջ
պատասելը, այնտեղ ազատամբական
գործի համար միլիոններ կը թա-
փէին:

Բայց ու՞ր են մեր միլիոնները, մի-
լիոնները չենք ուզում, ու՞ր են տաս-
նեակ հազարները: Հայը ասում է —
երբ Հայաստանը ազատուեց, շատ բան
կը զոհեմ. նա երբեք չի օգուտ հառ-
կնալ որ այդ ազատութիւնը ձեռք
բերելուց առաջ են պէտք մեծ զոհո-
ղութիւնները:

(Շարունակելի)



ժը .

Իրազննական դասաւանդումը բնութեան ընթացքին կը մօտեանայ, որուն դերը սերունդներու յեղաշրջման մէջ գերազանց է . հետեւաբար բնութեան անփոփոխ ու մշտապէս օրէնքներէն բխած ուսուցման մեթոտը արդարանալի է . Այն համեմատութեամբ որ ուսուցման ձեւը կը շեղի յիշեալ օրէնքներէն, նոյնքան ալ չէ կարող նպաստակայտը մարտ արդիւնաւոր ըլլալ . Այս ճշմարտութիւնը ընդունելէ յետոյ մէկէ աւելի մեթոտներու գոյութիւնը տարակուսելի կը դառնայ . Ըստ այդմեթոտը հաստատուած բնական հիմի վրայ կը համապատասխանէ ամենէն աւելի բնութեան մօտ ապրող մարդուն—տղուն խորհելու եղանակին . Երեխան սորվելու բուն տենչէ մղուած ամէն կերպ տպաւորութեան առջեւ կը բանայ իր սիրտն ու միտքը .

Ուստի եթե ստանան երեխաները իրենց կեանքի առաջին օրերուն մէջ ազնուացուցիչ ու բարձրացնող տպաւորութիւններ վատ հակումները ինքնիրեն զինաթափ կըլլան, եւ ահա՛ ապահովուած է դաստիարակութեան ու կրթութեան կարելիութիւնը . Արքան փափաքելի էր, որ հայ երեխայի դաստիարակութիւնը սկսէր այս ուղղութեամբ, բայց որքան կը մնջանջուի մեր մէջ անոր դէմ . . .

Իվանիօն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պօրիս Սարաֆով իր սպայագնդով և 70 հայդուկներու խմբով ժը Խիւրք սահճանապահներու շղթային մէջէն յաջող կերպով անցաւ պուլկարական սահմանէն ներս և հասաւ Սօֆիա . Մակեդոնացի հերոսը բռնած է միշտ լեռնային ճանապարհներ և այսպէս աննշմարելի մնացած է Խիւրքերու կողմէ .

Վերահաս ձմրան պատճառաւ Սարաֆով ստիպուած էր ապստամբական գործողութիւնները զադրեցնել . Իր իջած պանդոկը շուտով մեծ բազմութեամբ շրջապատուեցաւ . Մակեդոնացիները արտասուալի աչքերով կողմէին ազատութեան հերոսը տեսնել և ձեռքը սեղմել . Սարաֆով 25 օր շարունակ վտանգաւոր արշաւանքներ ըրած է պուլկարական սահմանէն ներս անցնելու համար . Երապամեց, որ Ռանասթրի ապստամբութեան մէջ ինկած են 1200 հոգի և միսիր գարձած 130 գիւղեր, այսուհանդերձ դարձաւ յեղափոխական կազմակերպութիւնը կը շարունակէ իր գործունէութիւնը և քրիստոնեայ Ալպանացիները

կօզի են իրենց .

Սարաֆովի հետ եկած են նաև իր երկու սպաները՝ Խիւրով և Խիւրովիչ . Վերջինը Մօսկովէկի օգնութիւն է . Սարաֆովի ընկերը Տենչէվ սպաննուած է սահմանը անցնելու տակն .

—Աստուարութիւնը ձրբաւ կաշիք քանի մը ուսուսէր սպաներ, որոնք ընտրութեանց միջոցին կառավարութեան հակառակ դիրք բռնած էին .

—Վառնայի կիմնադիտայի Երգ. դասարանի աշակերտ մը դաշոյնի հարուածով մը ծանր կերպով վիրաւորեց ուսուցիչ մը ու անմիջապէս դաշոյնի երեք հարուածներով ինքնասպան եղաւ . Ուսուցիչին վէրքը կուրծքին վրայ է և ունի 7 սանդիմէթր խորութիւն .

—Վառնայի մտազործները գործադուլ են ըրած . Անոնք կառավարութեան կը պահանջեն նուազեցնել դարիւնի տուրքը .

ԳՍԼԻՅԻՆ ՊԱՆՏՈՆԱԿ

Պէթօլ Զայթ. «Ինչ այն լուրը՝ թէ որոշ մտադրութիւն կայ Գալիցիան հրատարակելու համարուեցաւ . Գալիցիան պաշտօնանկ եղած է և անոր տեղ կողմակի կառավարիչ կարգուած զօրաւոր կուրսպատկին, Ռուսաց պատերազմական նախարարը .

Կառավարութիւնը տեսնելով յամառ գիմագրութիւնը մեծ զիջում մըն էր, որ ըրաւ հայերուն, սակայն ան ունի թագուն նպատակներ . ասով կուզէ լռեցնել տալ զոգքի ձայնը և զըլուխ հանել պաշտօնական աւազակութիւնը . Պէտք չէ խաբուել .

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ռուսիոյ և Աւստրիոյ գէսպանները Բ. Գուրբերթով պահանջեցին բարենորոգմանց ծրագրի անվտանգ և շուտափոյթ գործադրութիւնը . Իրերեւ այդ ազդեցութեան տակ էր, որ Սուլթանը ընդհանուր ներում հաշակեց մակեդոնացի քաղաքական յանցաւորներուն համար .

—Խորիմէն Թուրքիա գողթոյ թաթաւները խումբ խումբ ետ կը վերադառնան, երևի չի գտնելով Թայիֆայի երկրին մէջ իրենց երազած «Տէնչէթար» . Բայց այս անգամ ուս կառավարութիւնը կը մերժէ ընդունիլ զանոնք և պատուիրած է որ երկուողները եր դրկել .

ՄԱԿԵՂՈՆԱԿ

Ռուս թերթի մը թղթակիցը սեռակցութիւն ունեցած է Սերպիոյ արտաքին գործոց նախարար Կնդիէ Նիքօլիչի հետ, որ զիւրազէտի համար կը վայելէ . Վերջինս ըսած է հետեւեւել խօսքերը .

«Մի բոց շիջելի ծրագրին գործադրումը հաշիւ թէ խաղաղեցնէ Մակեդոնիան, որովհետեւ ծրագրին մէջ էն կարեւոր կէտերը ի նկատի չեն առնուած . Մակեդոնիա և հին Լեւրպիա պուրկ են մարգկային ամէն իրաւունքներէ . Սերպիա ներկայ ծրագրին դժգոհ չէ, որովհետեւ այդ յառաջդիմական քայլ մըն է, որ առնուեցաւ, բայց թէ ինչի՞ պիտի յանգի . Երբ չէ . Գրուելիւնը Մակեդոնիոյ մէջ անաւանի է, նոյնիսկ ապստամբութեան շմասնակցողներու համար ալ . Տուրքերը սպաննիչ ծանրութեամբ կը ճնշեն ժողովուրդը . Լեւն տղամարդ 40 դահկան, ամէն կին 18 դահկան պիտի տուր վճարելու է . Լեւն ձիւ համար 20, ամէն կովի կամ եղի համար 12 դահկան, ամէն պատահանի համար 60, նոյնիսկ ամէն կատուի համար 50 փարա տուրք կայ . Փոխանակ հնաւանդ տասնորդի՝ հիմայ կառավարութիւնը կը դանձէ բերքերուն 1/8ը .

Եթէ պետութիւնները ձմրան խաղաղութեանն օգտուի ուզելով կարգ և կանոն շմտցնեն Մակեդոնիոյ մէջ, ապստամբութիւնը զարնան կըսկսի աւելի մեծ ծաւալով .»

—Մակեդոնացիներուն օգնութիւն զրկելու համար Սերպիոյ մէջ կաղմուած է բարեգործական ընկերութիւն մը .

Ռուսիոյ կարմիր խաչի ընկերութիւնը Մակեդոնիա օգնութիւն զրկելու համար նոյնպէս միջոցներ ձեռք առած է .

ՌՈՒՍԻԱ

Թոմսքի մէջ լուստրոնական ներկայացման մը միջոցին ուսանողները ազդակներով և թրուսցիկներ ցրուելով փորձեցին խռովութիւն հանել . Չեյրակալուեցան 150 ցուցարարներ . զօրքը ցրուեց թաւրոնի մէջ հաւաքուած բազմութիւնը .

—Այն լուրը թէ մտադրութիւն կայ Լամուսով, արտաքին գործոց նախարարը, հրատարակելու չը հաստատուեցաւ, բայց բարձր շրջանակներու մէջ Լամուսովի դէմ յառաջ եկած է թշնամական ուժեղ հասանք մը, որ կաշխատի զայն տապալել .

—Յորը յայտնած է, որ ինք ձարոնի դէմ պատերազմ չսխտի

հրատարակէ մինչեւ որ միւս կողմը զինքը ծայրայեղութեան չը մղէ . այսուհանդերձ Լոնտօնի թերթերը վաւեր թուրքոյն անցած չեն նկատեր .

ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1. «Գրուոր Կ. Յ. Փաշայեան» Պերսիականի սնունդը՝ Մնունդից մինչեւ 15 տարեկան

«Գրուոր» միտք՝ առողջ մարմնոյ մէջ՝ շեշտուած սկզբունք մըն է մանկավարժութեան մէջ . Մրնունդէն մինչեւ 15 տարեկան երեխայի մտաւոր և մարմնական զարգացման ամենաարմար և ամենափափուկ շրջանն է . Մեր յարգելի աշխատակցի ներկայ գործը իր տեսակին մէջ իբրեւ առաջին կուպայ կարեւոր տեղ մը բռնել հայ նորածին մանկավարժական զրականութեան մէջ, Հոն տրուած են երեխայի ֆիզիքական զարգացման տեսակետով շատ օգտակար հրահանգներ . ամէն հայ մայր, ամէն հայ ընտանիք ունենալու է գայն .

Գրքոյկը Թաւրիչի լսարանական ընկերութեան անգրանիկ հրատարակութիւնն է . գոյացած արդիւնքը պիտի յատկացուի նոյն ընկերութեան . Գինն է 1,5 ֆրանք .

2. «Իսկանդր Գրականութեան և Արուեստի Ա. Գիրք»

Կիսամսեայ շքեղ հրատարակութիւն մը . Ա. Մելիքեանի-Պետրուրդ .

3. «Նկեղեցական կալուածները և Գահիրէի Միթիւնկը»

Բանաստեղծութիւն նաղարէթ Մ. Աղազարժի .

Բանաստեղծ պատմական և իրաւունական փաստերու վրայ հիմնուած՝ պարզած է Հայոց հեղեղեցական կալուածներու անձեռնմխելիութիւնը .

ԹԱՏՐՈՆ

Նատէժտա հայ դերասանական խումբը վաղը հինգշաբթի ներկայացում պիտի տայ Տէր և Տիկին Յակոբեանի մասնակցութեամբ եւ Տ. Վ. Պապայեանի առաջնորդութեամբ .

Ծրագիր

1. «Մարի Ժան» 6 արարուած բարոյալից կտոր մը .
 2. Պար եւ երգ Օր. Օլիկ եւ Հաճի Յակոբ Քէօլեանի կողմէ .
 3. Հովիւք եւ հովուէր, համայն երգ Տ. Պապայեանի եւ Օր Վեհանուչի կողմէ .
 4. Խմբերգ եւ «Պոտոսալոս բօխկը», զաւելտական ծիծաղաբար կըտոր մը 3 արարուածով .
- Լուսակեր գրուել ուզողները թող աճապարեն կանուխէն գնել տոմսակները .
- Գինները չափաւոր .
- «Եւսեժէժտա»

Отговорникъ Мурадъ Ераносянъ

Цедатинча «Взаимность» Варна